375010 - ՀՀ, Երևան, Ագաթանգեղոսի 7բ., հեռ. (37410) 52-51-90
E-mail: oukhtararadi@yahoo.com, www.oukhtararati.com

**Հայտարարություն**
**(Թիվ 11)**

**«Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման, երկկողմ հարաբերությունների զարգացման մասին» ստորագրված արձանագրությունների կապակցությամբ**

Մենք վստահ ենք, որ ժամանակակից Թուրքիան հավատարիմ է վերջին հարյուրամյակներին փայփայած պանթուրքիզմի ու պանթուրանիզմի գաղափարներին, որոնք կազմում է իր արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները, ինչի ուղղությամբ էլ հերթական քայլն է կատարվել: Ուստի վերոհիշյալ արձանագրությունները իրենց տրամաբանությամբ վտանգում են հայ ժողովուրդի գոյությունը հայրենի բնօրրանում՝ Հայկական լեռնաշխարհում:

Ստորագրելով վերոհիշյալ արձանագրությունները Հայաստանի իշխանությունները օգնում են վավերացնել Հայաստանի և Թուրքիայի միջև այսօր գոյություն ունեցող, սակայն իրավական հիմք չունեցող՝ քեմալական Թուրքիայի և բոլշևիկյան Ռուսաստանի երկկողմ հանցավոր համաձայնությամբ հայ ժողովուրդին պարտադրված սահմանը, անտեսելով Սևրի պայմանագրով հաստատագրված և ԱՄՆ 28-րդ նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռով Հայաստանին հատկացված տարածքը: Այս քայլը հարվածելու է հայկական իրավունքների պահանջատիրությանը, որն իր մեջ ներառում է Արևմտյան Հայաստանի վերադարձ, ցեղասպանության դատապարտում, ցեղասպանության հետևանքների վերացում:

Հայոց նորագույն զինյալ ազատագրական պայքարը սկսվել էր Սփյուռքում 1970-ական թթ. նպատակ ունենալով ազատագրել Թուրքիայի կողմից բռնազավթված հայկական տարածքները: Այդ պայքարը շարունակվելու է մինչև վերջնական նպատակի իրագործումը:

**«Ուխտ Արարատի», ՀԱՀԳԲ-ի (ԱՍԱԼԱ) ազատամարտիկների և նախկին քաղբանտարկյալների կազմակերպություն**

**8 սեպտեմբեր, 2009թ.**